



Մեր արեգակնաին համակարգը: Մեր կուրի

Ներկայացնում է՝ Նապոյան Մարիան

Տեղեկություն

Արեգակնային համակարգի ամենափոքր և Արեգակին ամենամոտ մոլորակն է: Այն պտտվում է Արեգակի շուրջ 87,969 երկրային օրվա ընթացքում: Մերկուրիի ուղեծիրը ունի Արեգակնային համակարգի մոլորակներից ամենամեծ էքսցենտրիսիտետը և ամենափոքր ուղեծրի թեքումը: Մերկուրին կատարում է երեք պտույտ սեփական առանցքի շուրջ Արեգակի շուրջ երկու պտույտների ընթացքում: Մերկուրիի ուղեծրի պերիհելին պտտվում է (պրեցեսիա) Արեգակի շուրջ 43 կորի վայրկյանով մեկ հարյուրամյակի ընթացքում, այս ֆենոմենը բացատրվել է 20-րդ դարում Ալբերտ Այնշտայնի Չարաբերականության ընդհանուր տեսությունում: Մերկուրիի տեսանելի աստղային մեծությունը երկրից դիտելիս կազմում է 2,3 – 5,7, սակայն այն դժվար է դիտարկել, քանի որ նրա ամենամեծ անկյունային հեռավորությունը Արեգակից կազմում է ընդամենը 28,3°: Այդ պատճառով Մերկուրին հիմնականում կորում է Արեգակի թագի փայլի մեջ: Եթե չլինի Արեգակի խավարում, Մերկուրին կարելի է դիտարկել միայն արևամուտի ժամանակ եթե այն լինի իր ուղեծրի ամենաարևմտյան կետում կամ արևածագի ժամանակ եթե այն լինի իր ուղեծրի ամենաարևելյան կետում: Երկրագնդի հասարակածին մոտ Մերկուրին կարելի է դիտարկել ավելի հեշտությամբ, քանի որ նրա բարձրությունը հորիզոնից հասնում է մինչև 28°: Սա պայմանավորված է նրանով, որ Արեգակը հասարակածում մայր է մտնում և ծագում ավելի արագ, այսինքն մթնշաղի ժամանակահատվածը ավելի փոքր է, ինչպես նաև խավարածիրը հատում է հորիզոնը հասարակածում ավելի սուր անկյան տակ: Մերկուրիի մասին համեմատաբար քիչ բան է հայտնի, երկրի վրա տեղակայված աստղադիտակներով հնարավոր է եղել դիտարկել միայն նրա լուսավորված մասը, սահմանափակ մանրամասնություններով: Մոլորակի մանրակրկիտ հետազոտությունները առաջ շարժվեցին երկու ավտոմատ միջմոլորակային կայանների օգտագործմամբ: Նրանցից առաջինը ՆԱՍԱ-ի կողմից արձակված Մարիներ-10 սարքն էր, որը նկարահանեց և փոխանցեց մոլորակի մակերևույթի մոտ 45%-ը 1974-1975 թվականներին: Երկրորդը Մեսենջեր ԱՄԿ-ն է, որը մուտք գործեց Մերկուրիի ուղեծիր 2011 թվականի մարտի 17-ին:

10 փաստ Մերկուրի մասին

1. Մերկուրին Արեգակնային համակարգի ամենափոքր և Արեգակին ամենամոտ մոլորակն է: Այնուամենայնիվ, նրա հեռավորությունն Արեգակից բավականին մեծ է և կազմում է 57,909,068 կմ: 2. Մերկուրիի ուղեծիրն ունի Արեգակնային համակարգի մոլորակներից ամենամեծ էքսցենտրիսիտետը (ձգվածությունը) և ուղեծրի ամենափոքր թեքվածությունը: 3. Մերկուրիի վրա մեկ տարին տևում է ընդամենը 88 երկրային օր, իսկ մեկ օրը Մերկուրիի վրա համարժեք է 176 երկրային օրվա: 4. Մերկուրիի միջուկում երկաթի տոկոսային պարունակությունն ավելի մեծ է, քան Արեգակնային համակարգի ցանկացած այլ մոլորակի մոտ: 5. Մոլորակն ունի խոշոր երկաթյա միջուկ, որը հանդիսանում է մագնիսական դաշտի գոյության պատճառը: Մերկուրիի մագնիսական դաշտը երկրի մագնիսական դաշտի 0.01 չափի է: 6. Մերկուրիի միջուկը հեղուկ է, սա են վկայում մոլորակի պտույտի տատանումները, որոնք չափազանց մեծ են պինդ միջուկ ունեցող մոլորակի համար: 7. Արեգակնային համակարգի մոլորակների մեջ Մերկուրիի վրա դիտվում են ջերմաստիճանի ամենակտրոնկ փոփոխությունները: Դրան նպաստում է նաև Մերկուրիի մակերևույթի փխրունությունը, որը վատ ջերմափոխանցիչ է: 8. Մերկուրիի խառնարանները հիմնականում անվանվել են արվեստագետների անուններով (ճարտարապետներ, երաժիշտներ, գրողներ, բանաստեղծներ, փիլիսոփաներ, գեղանկարիչներ, լուսանկարիչներ): Որքան խառնարանը մեծ է, այնքան անձի նշանակությունը մեծ է ժամանակակից աշխարհում: Առաջին հնգյակի մեջ են Բեթհովենը (տրամագիծը՝ 643 կմ), Դոստոևսկին (411 կմ), Տոլստոյը (390 կմ), Գյոթեն (383 կմ) և Շեքսպիրը (370 կմ): 9. Մերկուրի մոլորակը կոչվում է հռոմեական դիցաբանության առևտրի աստծո՝ Մերկուրիի անունով, քանի որ այն շարժվում է երկնքում ավելի արագ, քան մյուս մոլորակները: Հունական դիցաբանությունում համապատասխանում է Հերմես աստծուն:

10. Մերկուրի մոլորակի հայկական անվանումն է Փայլածու և Հեյ: Փայլածու է անվանվում նաև Հին հայկական տոմարի գիշերվա ժամը 12-ը: Այն նաև հին հայկական տոմարի Ավելյաց ամսվա առաջին օրվա երկրորդ անունն է:

Տեսանյութ

https://www.youtube.com/watch?v=-Hv3Bpegeto&ab_channel=AreeEducationalCenter